ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/111

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից 30.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 30.10.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին 22.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 9,000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից 06.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

Առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը 07.11.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն: Նշվածի հետ կապված Ընկերությանը առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները:

«ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից նույն օրը էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ըստ որի ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն 22.10.2018թ. դրությամբ /հայտը

ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 9000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն, «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով աճուրդի շրջանակներում բացահայտվել է, որ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն 22.10.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ

որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Հայտնում եմ, որ որևիցե եղանակով երբևիցե չեմ ծանուցվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է եղել արձանագրված պարտավորության մասով «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը ՍՊԸ-ն 22.10.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն հարկ վճարողի անձնական հաշվի քարտից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն՝ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

Վերոհիշյալ հարցի հետ կապված Ընկերությունը 03.11.2018թ. դիմել է ՀՀ ՊԵԿ՝ խնդրելով լուծում տալ առաջացած խնդրին և «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առաջացած

պարտավորությունը չդիտարկել հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն: Նշված գրությանը դեռևս պատասխան չի ստացվել:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ դրոշմանիշների վճարի գծով առաջացած 9,000 ՀՀ դրամ պարտավորությունը Ընկերության կողմից մարվել է 03.11.2018թ.:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է. Սարգսյանի 08.10.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/98 և 02.11.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/104 որոշումներով նույն հիմնավորմամբ բավարվել են ներկայացված բողոքները և որոշում են կայացվել դադարեցնել բողոքաբեր ընկերությունների հայտերը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները՝ ժամկետանց պարտավորությունները դրոշմանիշների վճարների գծով առկա լինելու հիմքով, քանի որ ըստ բողոքը քննող անձի՝ առկա է Ընկերությունների իրազեկված չլինելու հանգամանքը, ինչի ուժով հայտը պետք է գնահատվի բավարար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ դադարեցնել «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 06.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Լիանա Կաչյանցը, ինչպես նաև լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ին Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/111 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից 09.11.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ««ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.10.2018թ. նիստի թիվ 2, 27.10.2018թ. նիստի թիվ 2 06.11.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությունները.

««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին 22.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածի՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության 2-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը 31.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության՝

- 3-րդ կետով արձանագրել է, որ Աճուրդի 25-րդ չափաբաժնի մասով «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ--ի կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկը կազմել է 266,400 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), իսկ Աճուրդի 26-րդ չափաբաժնի մասով՝ 217,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

- 4-րդ կետով որոշել է 25-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ին:

- 6-րդ կետով որոշել է «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Այնուհետև, 06.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 9,000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը՝ նույն արձանագրությամբ Հանձնաժողովի կողմից կայացվել է Ընկերության հայտը մերժելու մասին որոշում:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության տնօրենը պնդեց Բողոքում ներկայացված դիրքորոշումն ամբողջությամբ՝ ընդգծելով, որ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով աճուրդի շրջանակներում ի հայտ եկած՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունը առաջացած է եղել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով: Ընկրերության տնօրենը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով իր հարկ վճարողի անձնական հաշվի քարտում զետեղված տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 22.10.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն չի ունեցել: Այսինքն, Ընկերությունը, վստահ լինելով, որ չունի ժամկետանց որևէ պարտավորություն՝ հայտ է ներկայացրել Ընթացակարգին, և միայն պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունն ստանալուց հետո տեղեկացել է առկա պարտավորության մասին: Ընկերության ներկայացուցիչը վկայակոչեց նաև «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է

կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, նույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին), և հայտնեց, որ Ընկերությունը երբևէ հարկային մարմնից նշված նորմով նախատեսված ծանուցում չի ստացել:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- 22.10.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, իսկ վերջինիս դեբետային մնացորդը կազմել է 18,584 ՀՀ դրամ՝ ավելացված արժեքի հարկի մասով:

- Ընկերության կողմից 03.11.2018թ. «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ միասնական հարկային հաշվին փոխանցված 12,000 ՀՀ դրամ գումարի չափով վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 05.11.2018թ. «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 22.10.2018թ. դրությամբ ունեցել է 9,000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով հարկային պարտավորություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

- 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 4-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.10.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 9,000 ՀՀ դրամի չափով:

- «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ

զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարբտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 22.10.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 9,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի՝ Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, և ունեցել է դեբետային մնացորդ՝ 18,584 ՀՀ դրամի չափով՝ ավելացված արժեքի հարկի մասով:

- «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ հարկային մարմնի կողմից որևէ ծանուցում Ընկերությունը չի ստացել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ որ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել որ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության առկայության պայմաններում «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի

հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ՝ ապահովելով Կարգի 44-րդ կետով սահմանված պահանջների կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի -ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 09.11.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՆԻԿՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ Հանձնաժողովի 06.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ԱԴԱՄԱՆԴ-ՄԵԴ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ